կրում կալուածատէրերից, այսինքն այն աղաներից, որոնք զանազան միջոցներով անհագին հարստութիւն են դիզել և այսօր կալուածատէր են դարձել: Կրկնում եմ, այն աղաներից, որոնք սովոր չեն աշխատանքի, այլ որ և իցէ մի աֆէրիստութիւնով միշտ աշխատում են ուրիշի դառն քրտինքով ապրել և տզրուկի պէս ընկած ծծում են միջին դաս վաճառականների արիւնը: Յիշելով միջին դաս վաճառականներին, ուզում եմ ասել, որ սրանք են, որոնք ենթարկվում են մեր աղաների հարստահարութեանը. այո, միջին դաս վաճառականներն են, որոնք տարիներով վաստակում են, բայց միշտ ստրկաբար ստորադրված են և ամեն կերպ հարստահարվելով, վերջն էլ մի կտոր հացի կարօտ, զոհ են գնում մեր անգութ աղաների ճանկերում: Ասածներս ապացուցանելու համար, այս անգամ կը թողնեմ շատ տարօրինակ անցքերը, միմիայն կը պատմեմ մի դէպ.ք, որ պատահեց Նորերումս: Վերոյիշեալ աղաներից մէկը, որը աւելի սարսափելի է իր քաջագործութիւնների մէջ, տալիս իր խանութներից մէկը վարձով մի համեստ վաճառականի երկու տարի ժամանակով և տարեկան հազար րուբլիով, և մի և նոյն ժամանակ ստանում է վաճառականից 500 ր. առհաւատչեայ: Հէնց որ սկսում է վաճառականի ապրանքների Մօսկվայից գալը, իսկոյն աղան, նոտարի միջնորդութեամբ մի յայտարարութիւն է ուղարկում հետևեալ բովանդակութեամբ. «Այսօրվանից իմ դուքանի գինն է 2500 ր., եթէ համաձայն ես, խնդրում եմ պայմանագրես ինձ հետ, իսկ եթէ ոչ, տալիս եմ հինգ օր ժամանակ մինչև որ դատարկես դուքանս, հակառակ դէպքում, օրական կը վճարես 10 ր. և այլն»: Թէև իրաւաբանական կէտից նայելով այդպիսի սպառնալիքները ոչինչ նշանակութիւն չունեն, բայց, այնուամենայնիւ, մի անփորձ վաճառականի համար դա մեծ հարուած է: Վերջապէս մի քանի բարեսիրտ մարդկանց շնորհիւ հազիւ թէ քարասիրտ աղան համոզվում է տարեկան երկու հազար րուբլիով տալ իր խանութը: Բայց չը մոռանանք, ինչու համար փոխանակ մի հազարի՝ պէտք է վճարի պ. վաճառականը երկու հազար. միայն նրա համար, որ իր պարզամտութիւնից, կամ այսպէս ասած, իր անփորձութենից խաբված, հաւատացել է աղայի խօսքերին: Ահա այսպիսի տխուր տեսարանները միշտ պակաս չեն վաճառականութեան մէջ: Բայց ցաւելով պէտք է ասեմ, որ մամուլը շատ անտարբեր է դէպի վաճառականութիւնը: Իսկ եթէ երբեմն գրվել է վաճառականական կեանքից կամ առևտուրից, այդ միայն միշտ եղել է «Մշակում»:

Ա. Մէլիք-Այվազեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 29 օգոստոսի

Ես կարդում եմ «Մշակ» լրագրի շաբաթվայ 117-երորդ համարում, Ներքին լուրերի մէջ, թէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը «եղած ուսուցիչների դասերի մի մասը յանձնեց նոր անձինքների». և այդ անձինքների անունների մէջ ես տեսնում եմ յիշված նաև իմ անունը: Ես կարող եմ ձեզ, սակայն, հաւաստիացնել, որ այդ մտքով ոչ իմ կողմից մի քայլ արուած է դէպի յիշեալ դպրոցի հոգաբարձութիւնը և ոչ այդ վերջինի կողմից մի որ և է հրաւէրք հասած է ինձ:

Ընդունեցէք և այլն:

Ա. Արասխանեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ իշխան Դօնդուկօվ-Կորսակօվ օգոստոսի 26-ին վերադարձել է իր ուղևորութենից դէպի Բաթում, որովհետև Մեծ իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի գալը դէպի Բորժոմ յետաձգված է:

—

Մեզ գրում են: «Մեր Թիֆլիսի հայ վաճառականները չեն հետաքրքրվում ոչ լուրջ խօսակցութեամբ, ոչ էլ լրագրութեամբ: Մի բան կայ միայն, որ նրանց հետաքրքրում է,—դա գօտեմարտն է... Հէնց որ կարդում են յայտարարութիւն թէ Գլղանելին պէտք է մի որ և է այգում մենամարտի մի այլ ըմբիշի հետ, անմիջապէս մեր վաճառականները թողնում են իրանց խանութները, իրանց գործն ու առևտուրը և երեքով, չորսով մի ֆայէտօնի մէջ նստելով, ուղևորվում են յիշեալ այգին: Այդ տեսակ դիպուածներում մեր վաճառականները չեն խնայում իրանց փողերը:»

—

Մեզ գրում են ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ հետևեալը: «Մեր գիւղի երկսեռ դպրոցների ներկայ աննախանձելի վիճակը կատարելապէս իրաւունք է տալիս ինձ շատ տխուր և դառն ապագայ գուշակել նրանց համար, քանի որ դպրոցների դրամագլուխը այս և այն մարդու վրա հազարներով է կորչում: Եկամուտի աղբիւրները հետզհետէ ցամաքում են, դրամագլխի տոկոսները սրա կամ նրա ճանկերից դուրս չեն գալիս, աշակերտների թօշակները կանօնաւոր կերպով չեն ստացվում: Չը գիտեմ ո՞ր հոգաբարձուի խելքով, դպրոցի այս աղքատութեան ժամանակ, բոլոր աշակերտուհիները ձրիաթօշակ պիտի լինեն այս տարի: Ոչ հոգաբարձական և ոչ ուսուցչական ժողովներ չեն լինում:»

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք: Հաստատ աղբիւրներից մեզ հաղորդում են, որ Մ. Տ. Լօրիս-Մելիքօվ նուիրեց Մօսկվայի համալսարանին 14,400 րուբլ դրամագլուխ, որի տոկոսները նշանակվում են երկու ստիպենդիաների համար, բայց այդ ստիպենդիաները իրաւունք ունեն ստանալ Մօսկվայի համալսարանի կովկասցի ուսանողները: Իսկ եթէ կովկասեան համալսարանը կը բացվի, այն ժամանակ այդ ստիպենդիաները անցնում են այդ համալսարանը:

—

Մօսկվայի լրագիրները հաղորդում են, որ օգոստոսի 22-ին, Մօսկվայի գաւառական վարչութեան շինութեան մէջ, մօտ 3 ժամին կէսօրից յետոյ, բացվեցաւ Մօսկվայի գաւառի ուսուցիչների և ուսուցչուհիների ժողովը Մօսկվայի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ Ի. Իւ. Նէկրասօվի նախագահութեամբ: Ուսուցչական ժողովին ներկայ էին մօտ 50 մարդիկ: Ժողովի պրօգրամը հաղորդելուց յետոյ, նախագահը յայտնեց, թէ պ. Ստուպինից (գրավաճառից) ծանուցումն է ստացված, որի մէջ նա ցանկութիւն է յայտնում, որ ուսուցչական ժողովը քննէ պ. Դէրկաչէվի յօրինած և նրա հրատարակութեամբ ի լոյս ընծայած գրքերը, և հաղորդեց իր եզրակացութիւնը այդ գրքերի մասին: Նոյն տեսակ ծանուցումն ստացված է պ. Կօնդրակիից, որը առաջարկում է ժողովին քննել իր կազմած գիրքը «Դասագիրք սկզբնական կրթութեան համար» վերնագրով: Ապա, կիրակնօրեայ դասարաններ կազմակերպելու մասին զարթեցրած հարցի առիթով առաջարկված է ժողովի անդամներին տեղեկութիւններ հասցնել օգոստոսի 25-ին այն ուսումնարանների մասին, ուր արդէն գոյութիւն ունեն կիրակնօրեայ դասարաններ: Այդպէս, օրինակ, ցանկալի էր իմանալ, թէ ո՞վ է այցելում կիրակնօրեայ դասարանները, ո՞րքան բաժանումներ կան, ո՞րքան ուսումնարանական ժամեր, պարապմունքների ո՞րպիսի պրօգրամա կայ և ո՞րպիսի գրքեր են գործածվում ընթերցանութեան համար: Ապա նախագահի ճառից յետոյ ուսուցիչ Կօպօխին մի քանի նկատողութիւններ արաւ ընթերցանութեան և զեկուցումներ քննելու ժամանակ մի քանի պայմաններ աչքի առաջ ունենալու վերաբերութեամբ: Այնպէս որ ցանկութիւն յայտնվեցաւ զեկուցումները քննել ոչ այն նիստում, երբ նրանք կարդացվում են, այլ սկզբնական մասնաւոր խորհրդակցութիւնից յետոյ: Այդ բոլոր պայմանները որոշելուց յետոյ, կարդացվեցաւ ուսուցիչ Շուխվօստօվի շատ հետաքրքիր զեկուցումն «Թուաբանութեան դասատուութեան մեթօդների համեմատական արժէքը» (Եւտուշէվսկու և Բէմէի) վերնագրով: Մատնացոյց անելով Գրուբէի մեթօդի պակասութիւնների վրա, որին հետևում է Եւտուշէվսկին—զեկուցանողը առաջարկեց ձեռնարկվել Բէմէի մեթօդով և տարրական ուսումնարանում թուաբանութեան դասատուութեան լիակատար կօնսպէկտ ներկայացրեց, որը կազմելու ժամանակ նա օգուտ էր քաղել Ա. Ի. Գօլդէնբէրգի ցուցմունքներից: Այդ զեկուցման քննութիւնը նշանակված է օգոստոսի 23-ին ցերեկվայ 1 ժամին: Աշակերտներին ուսումնարանում ընդունելու ժամանակ ուսումնարանի հոգաբարձուի և վարժապետի դերի վերաբերեալ կանօնների կարճ քննադատութիւնից յետոյ, նիստը փակվեցաւ: Հետևեալ նիստը նշանակված է օգոստոսի 23-ին:

—

«Вѣд. Од. Град.» լրագիրը հաղորդում է, որ Օդէսայի համալսարանի մեռած պրօֆէսօր Պատլաեվսկու տեղ դիտաւորութիւն ունեն նշանակել դօցէնտ Գամբարօվին (Նօվօրօսիյսկի համալսարանի պրօֆէսօրի եղբայր) կամ պ. Տարասօվին, որը այժմ գտնվում է Եարօսլավեան լիցէի մէջ:

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Нива» ամսագրի հրատարակիչ պ. Մարկս հրատարակեց վերոյիշեալ ամսագրի մէջ իր տեսակցութեան պատմութիւնը Ի. Ս. Տուրգենէվի հետ Փարիզում: Բանը նրանումն է, որ Տուրգենէվ անցեալ տարի խոստացաւ «Нива» ամսագրի համար մի վէպ տալ, որի մասին վերջինի հրատարակիչը առաջուց յայտնեց իր ընթերցողներին: Այն ինչ Իվան Սերգէևիչ հիւանդացաւ, ճակատագրական հիւանդութիւնը սաստկանում էր, և «Нива»—ի հրատարակիչը, գործերով արտասահման ուղևորվելով, դիտմամբ գնաց Փարիզ անձամբ տեսնելու Իվան Սերգէևիչին և նրանից վերջնականապէս իմանալու նրա առողջութեան դրութեան և նրա դիտաւորութիւնների մասին: Տեսակցութիւնը կայացաւ յուլիսի 6-ին Բուժիվալում, տիկին Վիարդօի ամարանոցում: Պ. Մարկս հետևեալ կերպով է նը-

---

համեմատելով նրան ռուսաց բէլլետրիստների աշխատասիրութիւնների հետ, նա մեզ կերևայ անգոյն, անհաւատալի մի դրամայի նկարագրութիւն: Ի՞նչու: Որովհետև ուրիշ է ռուսի կեանքը, ուրիշ է հայի կեանքը: Հայի կեանքը ստեղծում է իր մէջ Մասիսեաններ նրանց բոլոր առանձնատեսակ յատկութիւններով, իսկ ռուսաց կեանքը եթէ ստեղծում էլ է իրան համապատասխանող Մասիսեան, բայց ռուս Մասիսեանի և հայ Մասիսեանի մէջ ահագին զանազանութիւն կայ. դա տիպերի զանազանութիւնն է, ազգային ոգու տարբերութիւնն է: Ուրեմն քննադատելով մի որ և է ժողովրդական գիրք, հարկաւոր է առաջ ուսումնասիրել ժողովրդի կեանքը, նրա կազմուածքը, ոգին և սա անշուշտ հարկաւոր է համ գրողի, համ էլ կրիտիկոսի համար: Առհասարակ պ. Հայկունու յօդուածների հոգին տրամադրված է համարել պ. Րաֆֆիի «Կայծեր»—ը և «Խաչագողի յիշատակարանը» ինչպէս հէքեաթ, ինչպէս մի անհասկանալի, հայի համար խորթ կեանքի նկարագրութիւն, որովհետև մինչև այժմս ոչ մի տեղ քաւոր Պետրոսի կամ Մուրադի տիպերը չեն դուրս հանած՝ ոչ ռուսաց, ոչ ֆրանսիական, ոչ անգլիական, վերջապէս ոչ մի լեզուում. երբ այդ ազգերի մէջ չը կան, ուրեմն հայի կեանքի մէջ էլ չը պիտի լինեն. ուրեմն և «Կայծեր»-ն ու «Խաչ. յիշատ.» ինչպէս այդ զարմանալի անհասկանալի տիպերի գործունէութեան վերաբերված գրուածքներ ոչ այլ ինչ են, եթէ ոչ հէքեաթներ, հանելուկներ և այլն: Այսպէս կը կարծէ հարևանցօրէն դատողը: Այսպէս է կարող ասել և պ. Հայկունին: Ես սխալ գործած չը պիտի լինեմ, եթէ ասեմ որ նայելով այդ երկու վէպերի վրա հայկական կեանքի տեսակէտից, նրանց տիպերը բաւականին ուղիղ են ներկայանում. նրանք ունեն հայկական հոգի, ունեն իրանց շրջանի կեանքին համապատասխանող գործունէութիւն. անծանօթ է թւում միայն այն մթնոլորտը, այն տեղը, ուր նրանք գործում են: Բայց այս վերջին հանգամանքն էլ խորթ, օտար չը պիտի հաշվի, եթէ աչքի առաջ ունենանք հայկական կեանքի ընդհանրութեան մէջ խիստ նկատելի առանձնութիւնները, և ահա ինչպէս: Հայերը երկար դարերի ընթացքում ենթարկվելով զանազան պատմական փոփոխութիւնների, ընկնելով զանազան ազգերի զանազան տեսակ կեանքի ոգու ազդեցութեան տակ, հասել են մինչև մեր օրերը կեանքի առանձին առանձին տեսակներով. այդ առանձնայատկութիւնները մասամբ մնում են մինչև այժմ, մասամբ անհետացել են ժամանակի հոսանքի մէջ: Բայց և այդպէս հայի հոգեկան աշխարհը մնացել է ըստ մեծի մասին նոյնը, ինչ որ էր բազմաթիւ տարիներ սրանից առաջ. միանգամ հայի արեան հետ խառնվել է մի տեսակի բնութիւն, տեմպերամենտ, որ մի որ և է երկրի բնակչութեան յատկանիշն է եղել, և այդ նրա մէջ մարմնացած տեմպերամենտը նա տանում է իր հետ ամեն տեղ. հայը կարող է փոխել իր բնակութեան տեղը, բայց նրա բնութիւնը չէ կարող ենթարկվել կլիմայական հանգամանքների փոփոխութեան՝ միայն մտաւոր զարգացումն է կարող մեղմել նրա բնութեան հետ և գուցէ յաղթել նրան: Սա է պատճառը, որ մեր գաւառների բնակչութիւնների, ինչպէս զանազան տեղերից եկուորների կեանքի մէջ շատ տարբերութիւններ են պատահում: Փորձեցէք համեմատել Ղարաբաղցի հայի կեանքը Երևանեան նահանգի հայի կեանքի հետ և նրանց մէջ ընդհանուր միանմանութեան մէջ կը գտնէ.ք շատ մասնաւոր տարբերութիւններ, որոնք թէպէտ և մասնաւոր են, բայց մեծ դեր են խաղում ներքին կեցութեան մէջ: Եթէ ես դուրս բերեմ Ղարաբաղի կեանքից մի տիպ, դա կարող է օտարոտի երևալ Ալէքսանդրապօլցու համար, և ընդհակառակը. ուրեմն մի տիպի վրա հասկացողութիւն կազմելու համար բաւական չէ նայել նրա վրա տեղական կեանքի տեսակէտից: Տիպերի մէջ այնքան տարբերութիւն կարող է լինել, որքան տարբեր են և կեանքի զանազան շրջանները: Որքան մեծ պատասխանատուութիւն կայ մի հեղինակի վրա, երբ նա լոյս է գցում մի այնպիսի պատկեր կեանքից, որին սովոր չէ ընդհանրութեան մեծամասնութիւնը, եթէ այդ պատկերը ի վերջոյ միայն երևակայութեան արգասիք լինի: Ի՞նչ կը լինէր «Խենթի» արժանաւորութիւնը, եթէ հեղինակի ստեղծած Թօմաս էֆէնդու նման հրէշաւոր տիպը չարդարանար. մենք «Խենթը» առաջին անգամ կարդալիս չէինք հաւատում, որ այդպիսի տիպ ծնվէր, զարգանար մեր ժողովրդական կեանքի մէջ. բայց բազմաթիւ վկայութիւններ մեզ համոզեցրին այս բանի մէջ և այժմ «Խենթը» մեզ համար աւելի թանգագին է: Որքան ցած կընկնէր Եւժէն Սիւի գրականական վարկը, եթէ նրա «Թափառական հրէայ»—ի պ. Ռօդէնի, Մօրօկի և այլոց տիպերը չը յայտնվէին իրականապէս ճիշտ: Ի՞նչ է ինքը «Թափառական հրէան», եթէ ոչ մի հէքեաթ, եթէ նայենք նրա վրա պ. Հայկունու տեսակէտից: Սակայն այդ հեղինակութիւնից յետոյ տեղի ունեցած պատմական անցքերը ցոյց տուեցին մեզ, որ այդ տեսակ հէքեաթներ շատ են պատահում կեանքի մէջ: Եւ որքան գովելի է մի հեղինակ, որ ձիրք ունի ըմբռնել այդ կեանքի մռայլ կողմերը, դուրս բերել հասարակութեան առաջ մթին պատկերներ, մռայլ տիպեր: Հայերի կեանքը անկարող է Ռօդէններ ծնեցնել, բայց կարող է քաւոր Պետրոսներ ունենալ: Ռուսահայերի համար քաւոր Պետրոսը մի ֆանտաստիկական, երևակայական տիպ է, իսկ պարսկահայերի համար նա համարեա սովորական է. պատճառները որոնեցէ.ք այդ երկու ժողովրդի ներքին կեանքի մէջ: Ես իմանում եմ մի այնպիսի պատմութիւն, որ կարող է աւելի ֆանտաստիկական և անհաւատալի երևալ քան «Խաչ. յիշատ.», բայց նրա հերոսը այժմ էլ կենդանի է և ունի կենդանի վկաներ: Եթէ ես նրան հասարակութեան առաջ դուրս բերէի, ինձ կասէին թէ դա հէքեաթ է: Այո՛, կեանքի մէջ շատ են պատահում այդպիսի հէքեաթներ: Մարդ պէտք է չափազանց օպտիմիստ լինի, չափազանց անհետաքրքիր լինի, որ չը նկատէ, որ ամեն տեղերի ժողովրդական կեանքի մէջ կատարվում են շատ հէքեաթներ: Աշխատեցէ.ք ծանօթանալ բոլորովին մօտիկ ժողովրդի կեանքի հետ և դուք կը տեսնէք, որ Ղարաբաղը ունի իր քաւոր Պետրոսը, Թիֆլիսի գաւառն իրանը, Ալէքսանդրապօլինը իրանը. և ամեն տեղ այդ քաւոր—Պետրոսի գործերի մէջ կայ մի ընդհանրութիւն, թէպէտ և նրանց գործերը կատարվում են բոլորովին տարբեր շրջաններում, բոլորովին տարբեր կերպով. ընդհանրութիւնը դուք զգում էք այն հանգամանքի առաջ, որ բոլոր քաւոր Պետրոսները գործում են մի նպատակի համար, և նրանց բոլոր գործողութիւնները սովորականից դուրս են: Ուրեմն զարմանալի չէ, որ մի հեղինակի զանազան աշխատասիրութիւնների մէջ պատահում են տիպերի, անցքերի նմանութիւն. անկարելի է մի հեղինակի, որ իրան համար ուղղութիւն է ընտրել լուսաբանել որ և է շրջանի կեանքը, որ նա գիտակցաբար փոխէ անցքերն ու տիպերը, իր հեղինակութիւններին առանձին ձև տալու համար: Հեղինակութիւնները կարող են տարբեր անուններ կրել, տարբեր ոճեր ունենալ, բայց նրանով չի ընկնի նրանց արժանաւորութիւնը եթէ նրանց մէջ պատահի նմանութիւն էլ. մէկը կարող է միւսի միտքը լրացնել, մէկը կարող է միւսի հասկանալու համար միջոց դառնալ, և այս մենք նկատում ենք օտար գրականութիւնների մէջ: Ուրեմն պ. Հայկունին մեծ սխալ է գործում, եթէ այդ կողմանէ պախարակում է պ. Րաֆֆիին:

(Կը շարունակվի)

